Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԽՈՍՔԸ ՆՈՐ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ՄԿՍՄԱՆ ԱՌԻԹՈՎ

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրապետական սիրով օրհնում ենք բոլոր մանկավարժներին, ուսանողներին ու աշակերտներին և շնորհավորում ուսումնական տարվա վերաբացման առիթով:

Գիտելիքի օրվա լուսաբաղձ խորհրդով սկսվում է ուսումնական մի նոր տարի, նոր սկիզբ՝ նոր հույսերով ու ծրագրերով: Սկսվում է եռանդագին աշխատանքի ու նվիրումի, ջանասիրության, գիտելիքների ամբարման ու արժեքների ճանաչման, հոգևոր ու մտավոր հասունացման ևս մեկ շրջան:

Սիրելի մանկավարժներ, կրթության ասպարեզի սպասավորներ և ուսանողներ ու աշակերտներ, Մեր աղոթքն ու մաղթանքն է, որ ձեր միասնական ջանքերով ուսումնական տարին լինի արգասավոր իր արդյունքներով, որոնք պիտի լուսավորեն ձեզանից յուրաքանչյուրի և ողջ մեր ժողովրդի ճանապարհը ու ծառայեն աստվածպարգև մեր Հայրենիքի առաջընթացին:

Թող Աստված շնորհազարդի բոլորիդ և առատապես օրհնի ու հանապազ պահպանի իր Ամենախնամ հովանու ներքո: Ամեն:

Օրհնությամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին,
1 սեպտեմբերի 2004 թ.